

ԻՐԱՌԻԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսի մասին հարցեր 12 փ.
» » Վեցամսեայ 6 փ.
Արտասահմանի հարց (Երկու քիւր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փ.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկէ հետեւեալ հասցեով

ԽՐԱՌԻԿՈՒԹԻՒՆ «ԻՐԱՌԻԿ» ՀՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլսի քաղաք)
Редакция на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյնովին կամ մասամբ:
Խմբագրութեան տղը 20 սանթիմ. երե-
քն աւելի անգամներու համար 20 օ/0
զեղջ կը լինի:

ՄԻ ՔՈՂԱՐԿՈՒԹԻՒՆ

Խմբագրի մը ամենէ աւելի մը-
տածել տուող պարագաներէ մին
է երբեմն պատահական թղթակից-
ներէ ու ծանօթներէ հասած նա-
մակներու պարունակութիւնը, երբ
նամակագիրը չուզեր իր իսկական
անունովը երեւալ ու կը ջանայ
ծածկանունի մը տակ տեղական
գործեր կամ հանրային խնդիր-
ներ լուսարանելու միջոցին այսինչ
խումբին կամ անհատին գէտ կը-
ծու և նոյն իսկ հայհոյալից ակ-
նարկութիւններ ընել: Այս պա-
րագան այնչափ մտածում չպիտի
պատճառէր եթէ նամակագիրը ա-
ռանց քողարկուելու համարձակու-
թիւն ունենար իր իսկական անու-
նով հրատարակ գալու: Ընդհեռ
ընդհակառակը ըլլալով, նա իր ա-
նունին սկզբնապէս զննել չի հաճե-
լէ գատ, ստեպ պահանջող կըլլայ
առանց յապաւումն իր գործածած
կծու բառերը նոյնութեամբ թերթին
մէջ տեսնելու: Այս կերպ յաւակ-
նոտները որչափ ծիծաղելի նոյն-
քան բազմաթիւ են դժբաղդա-
բար:

Կերեւայ թէ ասոնք այնպէս կը
կարծեն որ քննադատութիւն մը
կամ առաջարկութիւն մը լսելի ը-
նելու և ուշադրաւ ընծայելու մի-
ակ միջոցն է կծու և վիրաւորիչ
լիզու գործածելը, որ մեր կարծի-
քով աւելի կիրքերու գրգռում եւ
գործին փնտա կը պատճառէ:

Մենք պահանջողական խմբա-
գիր մը չըլլալով հանդերձ, այս
հաւատքը ունինք թէ հայհոյու-
թիւնը և վիրաւորիչ խօսքերը
գործ չեն լրացներ այլ գործ կա-
րեն. և թէ քննադատութիւնը յօ-
րաւոր ընծայողը դրական փաստն է
ոչ այլ ինչ:

Մենք ի հարկին բնաւ չի քա-
շուցանք մեր ստորագրութեան
տակ, մեր թերթին մէջ այնինչ
տեղի չունի որ այսինչ տեղի կու-
սակցամոլները ու շահատակութիւն
ընդունող հարուածելէ, բայց ոչ
հայհոյելով, ոչ չուտանքներ տե-
ղացներով, այլ ճշմարտութեան վը-
րայ լինելով ու փաստեր մէջտեղ

դնելով, Հետեւաբար մենք յար-
ձակում ընել չսիրողներէն չենք,
այլ կը փափաքինք որ յարձա-
կումները դրական փաստերու, ճշ-
մարտութեան վրայ հիմնուած ըլ-
լան: Երբ յոգուածագիրները այս
վերջինները իրենց խօսքերուն հիմ
ընտրած են, բնաւ թող չի քաշ-
ուին անունին հրատարակելէ եւ
հակառակաց թող ըսեն ամեն ինչ
որ ճշմարտութիւն մը, իրողու-
թիւն մը վեր կը հանէ, եթէ նր-
պատակին միայն այդ է. իսկ ե-
թէ ճշմարտութեան կամ ազ-
գասիրութեան քողին տակ կուզեն
ուրիշ անձնական հաշիւներ կար-
գադրել կամ կիրքեր յագեցնել,
այն ալ քողի տակ ծածկուելով ու
ազգային թերթերը միջոց ընտրե-
լով, դա պարզապէս վատութիւն
է:

Մենք անոնց կըսենք, եթէ
յայտնածնիդ ճշմարտութիւն է մի-
քողարկուիք. եթէ կը քողարկ-
ուիք առանց յեղափոխական կամ
քաղաքական պատճառ մը մէջտեղ
կենալու, սա կը նշանակէ թէ
դուք ալ ձեր ըսածին վրայ կամ
հաւատք չունիք կամ անկարող էք
զայն հաստատելու, ուստի երկ-
րորդ անհրաւելութիւն մը ըրած
կըլլաք պահանջելով որ գրածնիդ
անփոփոխ հրատարակուի:

Ո՛չ պարոններ, խմբագիր մը կիր-
քեր չոյելու, իր անձնական բա-
րեկամներուն ու ծանօթներուն
փափագին գոհացում տալու կոչ-
ուած չէ. անոր պաշտօնը միմիայն
ճշմարտութիւնը և հանրային շա-
հը պաշտպանելու մէջ կը կայանայ:
Նա խմբագրատան մէջ, իր գրա-
սեղանին առջեւ անձնական ամեն
բարեկամութիւն ու թշնամութիւն
կը մոռնայ. հոն անոր բարեկամը
ճշմարտութիւնը ու հանրութեան
օգտակար եղողն է. Կուզէ՞ք խմ-
բագրին բարեկամ ըլլալ ճշմարտու-
թիւնը պարզեցէք առանց հայհո-
յելու և մի քողարկուիք:

Յ. Գ.

Կը խնդրուի մեր յարգոյ բա-
ժանորդներէ որ հաճին իրենց բաժնե-
գիրները Ա.Ն.Յ.Ա.Պ.Ա.Ղ. միւզ հաս-
ցնել, նկատելով, որ ներկայ տարեշր-
ջանին իններորդ ամսոյն մէջ կը գտ-
նուինք եւ թէ թերթի մը հրատա-
րակման ծախքերը կանխիկ են:

—)o(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 30 օգոստոս 99

Տասնհինգ օրէ ի վեր երկու
«Հոգեհանգստեան» ունեցանք.
Թղթակցի մը պարտոց հակառա-
կած պիտի լինէի գոնէ եթէ լռէի
և յիշատակութիւն մը չընէի:

Եւ արդարեւ ի՞նչպէս լռելեայն
անցնիլ օգոստոս 14-5ը, որ ազ-
գային յեղափոխական պատմու-
թեան մէջ մեծ տեղ կը բռնեն,
իրաւ է, որ մենք այսինքն մեր
յեղափոխականներ, գէտ դիմաց
տաճկին հետ չը կուռեցանք, չը
զարկինք ու չզարնուցանք, սա-
կայն դահիճը մեզ ջարդեց մեր
մէջ խեղդելու համար «ազգային
ազատութեան ոգին»: Սուլթանը
և սուլթանականք պահ մը կար-
ծեցին որ մի քանի տասնեակ ը-
սենք և հարիւր հազարաւոր
հայեր մեռնելով մեռած պի-
տի լինին և իրենց խելքով ջն-
շած իսկ թէ ոչ յաւէտ, շատ եր-
կար տարիներու համար, հայ սըր-
տերէն հայկական ազատութեան
ձգտումները. այլ ի՞նչ խաբէու-
թիւն:

Այո՛, շատ հոգիներ վրայ տը-
ռինք և ո՛ր ազգ տուած չէ, մին.
չեւ ձեռք բերած է իւր ցանկալի ա-
զատութիւնը. բայց որքան խնդ-
րոյն մէջ ազգովին ցուցուած եղ-
բայսիրութիւնն ու օժանդակու-
թիւնն, նիւթական, մտաւորական
և բարոյական պաշտպանութիւն
ու խնամք, ցոյց տուին ու կու-
տան որ չէ՛ յաղագիտ Սուլթան,
կալ ազգին մէջ կենդանութիւն
որ չէ՛ մեռած և մեծ յոյս կուտայ
ապագային. «վրէժխնդրութիւն»
պիտի գոռան ու գոչեն նոյն ինքն
այն որքեր, որոնց աշաց առջեւէն
չեն անհետացած տակաւին այն
սոսկալի և արիւնալի տեսարան-
ներ, եթէ արդի հայութիւն չկըր-
նայ մի բան ընել մինչեւ այն ա-
տեն:

Միւթաբական է այս երեւոյթ
իր լայն նախաձեռնով, երբ ընդա-
նուր ակնարկով մը աչքիս առջեւ
կը պատկերացնեմ մեր վիճակ. սա-
կայն ո՛րչափ տխուր և եպիբրի
հակապատկեր մը կը գտնեմ, երբ
ինքզինքս կ'ամփոփեմ Սօֆիայի

ազգային շրջանին մէջ. Օգոստոս
11ին՝ 1877 Շիփկայի ճակատա-
մարտներէն մնացող պուլկար կա-
մաւորներ թէ՛ ի՞նչ հանդէսով և
ինչ «գեւորութեամբ» տօնեցին
կռուի դաշտին վրայ ինկնող ի-
րենց անմահ ընկերների յիշատակը
թէ եկեղեցւոյ մէջ և թէ դուրսը,
ժամերով մեր խօսակցութեան ա-
ռարկայ եղան. չգիտցողը գիտցո-
ղին կը հարցնէր, քիչ թէ շատ
պուլկարներէն հմուտը պուլկար
թերթեր կը պրպտէր օրուան հան-
դիսին պատճառներուն և պարա-
գայից վրայ քիչ թէ շատ լուր և
տեղեկութիւն առնելու, սակայն
բանի՞ հոգի ունեցանք մենք, որ
մեր ազգային այդ տխուր աւուրց
ազդեցութեան ներքեւ եկեղեցի
հրամմէր և հոգւոց մը մըմէջէր
իւր սիրելեաց յիշատակին համար,
որ մեռան մեզ համար, զոհուե-
ցան մեր գաղափարներուն համար:

Թմբուկ և նուա՛գ պէտք էին:
Շարաթ յառաջ Արթ. Տէր Հայրը
եկեղեցւոյ բեմէն ծանոյց, որ
14-15 աւուրց յիշատակին համար
15ին Աստուածածնայ օր, կիրա-
կէ, «մասնաւոր հոգեհանգստեան»
պիտի կատարուի. մեծ յոյս ու-
նէի, որ գոնէ Հայաստանցի եղ-
բայրներ անպակաս պիտի լինէին
այդ օր, քանի որ ինկածներ և
ջարդուածներ աւելի իրենց եղ-
բայրներ, հայրեր, ազգականներ
ու բարեկամներ էին, սակայն որ-
չա՛փ խաբուեցայ. շա՛տ քիչեր,
այո՛, շա՛տ քիչեր ներկայ էին.
բաղաքիս մէջ մօտիկ 400 հայ կայ,
կրտսէի, ու մենք այդ օր հազիւ
30-50 հոգի ունեցանք մի քանի
պուլկարներով հանդերձ, որոնք
լսած ու եկած էին:

Ինչո՞ւ արդեօք.
Միեւնոյն սառնութիւնը և օ-
գոստոս 22ին. այդ օր ալ մի շա-
բաթ առաջ դարձեալ եկեղեցւոյ
բեմէն եղած ծանուցման մը հա-
մաճայն «Հոգեհանգստեան պաշ-
տօն» մը ունեցանք. հոգին հայ-
կական չէր արդարեւ, բայց ո՛ր
հայ լսած չէ Օր. Ֆրայզերի անունը
այդ օրիորդը օգոստ. 14-15ին
ջարդերէն Պուլկարիա ապաստա-
նող գաղթական հայուն պատմու-
թեան մէջ մեծ և նշանաւոր տեղ

կը բռնէ . ամէնայն ալ աւելի երբ քաղաքիս անգղիական Պ. հիւպատոսը հանդերձ ընտանեօք իրեն եղած զեկոյցի մը վրայ բարեհաճած էր պատուել մեր այդ հոգեհանգստեանը, մինչդեռ մերայինք ո՞վ գիտէ որ տեղեր կը պըտտէին հոգեով և մարմնով . գոնէ գաղթական հայեր, որոնցմէ ոմանք առատապէս վայելած էին Պ. հիւպատոսին պաշտպանութիւն իրականացնող զաւակները, որոնք իրեն իրաւամբ համակիր են, և եթէ քահանայ փոխելու պէտք ալ կենայ, չեմ կարծիր որ քիչ թէ շատ պատուով զգացումի տէր Սօֆիացին Տ. կարապետ ուզէ . և այս համոզումով ալ թող ներուի ինձ հայցնելու սա մէկ քանի «տախտակը պակաս»ներուն թէ իրենց ինչին վստահելով այսպիսի ձեռնարկներ կընեն :

Երբեմն երբեմն, երբ կը կարգանք լրագրաց մէջ, որ այս կամ այն երեւելի եւրոպացին մեզ նըկամամբ աննպաստ կարծիք յայտնած է, կը ցաւինք և կը քննադատենք ալ իր ընթացքը ինքզինքնիս արդարացնելու համար . բայց որուն է յանձնաքը :

Սակայն ինչ և քանի մարդիկ տեսայ երէկ եկեղեցին, Աստուած իմ . այս փոքրագիւններ եկած էին Պոլկարահայուն ծանօթ Տ. կարապետ քահանային պատարագը տեսնելու . զի ասոնք իրենց կարծիքով ստակ զրկելով մասնաւորապէս հրաւիրած էին յիշեալ քահանան տեղս գալու և պաշտօնավարելու համար . բայց լա՛նք թէ խնդանք : Տ. կարապետ որքան ալ պակասութիւններ ունենայ, այնչափ անխելք չէ որ փռած ճիւղին վրայ ոտք դնէ . շատ շուտ և լաւ հասկցաւ, որ զինք հրաւիրողներ և համակիրներ պաշտօնական և ոչ մէկ հանգամանք չունենալէ զատ խելք ու միտք ալ չունին, և որ իրեն պաշտելին է ուկի երթէք, ամենքն ալ զօգոզ են իրեն պէս . «ազգական տեսնելու եկած եմ» յայտարարեց առաջին օրէն իսկ և թերեւս մէկ երկու օրէն մեկնի

նոյն ինքն իրեն շահին համար՝ զի ինչպէս ըսի, ինք ալ յոյս չունի, որ կրնայ տեղս մնալ, զի քաղաքիս քահանայն պաշտօնանկ ընելու պատճառ մը չկենալէ զատ հասկացող և խոշոր գլուխ մարդիկ իրեն իրաւամբ համակիր են, և եթէ քահանայ փոխելու պէտք ալ կենայ, չեմ կարծիր որ քիչ թէ շատ պատուով զգացումի տէր Սօֆիացին Տ. կարապետ ուզէ . և այս համոզումով ալ թող ներուի ինձ հայցնելու սա մէկ քանի «տախտակը պակաս»ներուն թէ իրենց ինչին վստահելով այսպիսի ձեռնարկներ կընեն :

Ա.

Թ. Բազարձըզ, 25 օգ. 99

Տեղւոյս դպրոցական գործերը անորոշ վիճակ մը ունին 2 ամսէ ի վեր քննութիւնները վերջացած են և անկէ ի վեր վարժարանի վրայ խորհող չկայ . եկեղեցին ու դպրոցը ազգայնաց նուէրներէն զատ գրեթէ չունին ուրիշ եկամուտ մը . ամեն տարի իւրաքանչիւր ոք որոշ գումար մը կատարագրէ, որով տարեկան պիտոճէն կը հաւասարակշռուի :

Երկրորդ ատենէ ի վեր թէ Հոգաբարձութիւնը և թէ Թաղ խորհուրդը ոչ նիստ ըրած ունին և ոչ ժողովուրդէն դրամ հաւաքած : Նոր հոգաբարձուի ընտրութեան համար կառավարութիւնէն պաշտօնական հրաւեր ստացած և չեն պատասխանած ու յայտնի դժգոհութեան առիթ տուած են որ երբեք պատուաբեր չէ : Եւ ահա այս պատճառներով անորոշ է գրպոցին ապագան, դասատուներուն ունէ զեկոյց մը եղած չէ մինչեւ հիմայ և ամենքը մարմնով ու մտքով «վազանձ»ի մէջ են :

Սակայն սեպտեմբերը մօտ է և պէտք է վերջ մը տրուի այս կա-

ցութեան . նախորդ հոգաբարձութիւնը իր պաշտօնավարութեան շրջանը լրացած կը համարի և կուզէ ձեռնպահ մնալ, իսկ նորը արդէն գոյութիւն չունի . անհոգութիւնը ու անտարբերութիւնը իրենց իշխանութիւնը տարածած են տեղւոյս ազգայնաց վրայ, և որուն լուծին տակ կը հեծէ եկեղեցին ու դպրոցը : Միւսիւմարաւան է սա կէտը միայն որ հակառակ իրենց համեստ կացութեան միշտ վճարող են յանուն Ազգ. ա. մին գործոց . բայց դժբաղդաբար կը պակսին ջանասցող ձեռքեր :

Տեղւոյս հայութիւնը տարիներ առաջ իր մէջ շատ անհամաձայնութիւններ և կուսակցական պառակտումներ ունեցած է և շատ վնասուած, հիմայ փորձառու ըլլալով միշտ կը խորշի այդ տեսակ հանգամանք ունեցող ինքիւններէ և առիթներէն :

Այս շարժումն Հայեցիի «կէլ գանձարա» բաժնին մէջ երեցաւ այդ կարգի գործիւն մը որ գէշ ընդունելութիւն գտաւ, այդ գըրողը ատու աւելի կը վնասէ տեղւոյս ազգ. շահերուն, քանի որ չկային խնդիր հանել կուզէ . «Հայեցի»ի պատ. խմբ. ուշադրութեան կը յանձնարարենք :

Ա. Ե.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ

ԱՆՔԱՍԱՆ. ԲԱԿ. Ի ԳԱԶԻՐԷ

Տխար խմբագիր.

Խնդրենք որ, հետեւեալ հերքմագիրը հաճիք հրատարակել Ձեր անկողմնակալ և ազգագույն թերթին մէջ, յանդուրժութիւն սրտի ուղղամիտ ազգայնաց :

Ձեր Իրաւունք պատուան լրագրի անցեալ 50 թիւ թերթին մէջ Ոսկան Նազար ասորագրութեամբ յղուածա-

գիր մը կարգ մը անստոյգ յայտնաւթիւններով բաւական նախաւիրք ըրած էր Պէնիւնի նման բազմամայ գերասանի մը, որուն ճշմարտապէս միայն երախտապարտ է հայկական թատերաբեմը :

Ի միջի այլոց տեղւոյս ընթերցասիրաց Պատ. ընկերութիւնը Պէնիւնի խաղալիք նկատել տալէ յետոյ իբր ապացուցեալ ճշմարտութիւն կը յաւելու հետեւեալը, զոր իր ամբողջութեամբ առաջ կը բերենք. «Արժանահաւատ աղբիւրներէ կը տեղեկանանք թէ, (խօսքերը հասկնալու ու քննադատելու ընթացքով կը թողունք) տեղւոյս Ազգ. քառանկանամիտ Օրերա խորհրդակցին մէջ Ընթ. Վարչութեան կազմակերպողներ կայացուցանէին քանի մը օր առաջ տրուած ներկայացումը, որը մօտաւորապէս 70 օսկի վնաս տուաւ սովորական համար քանի մը օր յետոյ տրուած ներկայացմանը, դարձեալ այս գերասան Պէնիւնի գործածածն է եղեր, դարձեալ անոր մատր խառն է եղեր այս գործին մէջ, որը ինչ ինչ միջոցներով յաջողեց է համոզել Աղքատախնամ վարչութիւնը :»

Գրեթէ միեւնոյն խօսքերը ի վերջոյ կրկնելով կըսէ. «Փոխանակ 75 թ. 150 օսկոյ գումար մը կը պատահէր Ընթ. Վարչութեան տուած ներկայացումէն, եթէ ինչպէս կը հաստատեն, քանի մը օր առաջ Օրերա խորհրդակցին մէջ չը տրուէր Աղքատախնամի ներկայացումը» քննադատ ըլլալու մասին քննախառնք չունինք հակառակելու միայն թէ, ինչպէս ինքը կըսէ, «ուղղութիւն քննադատութիւնը միայն պայման է յառաջդիմութեան» . եթէ կրնա զուելի այսպէս, պէտք է նաեւ ընդունիլ թէ, ուղղամիտ քննադատութիւն մը հարկ անհրաժեշտ է որ բացորոշ ճշմարտութեան վրայ հիմնուած ըլլայ և ոչ չգիտցողի մը պէս ըսել թէ «Պէնիւնի գործածածն է եղեր, մատր մէջ ջրն է եղեր» կարծենք լաւ խորհող մը ստուգութեան նախաձեռնարկի մը եւ անկողմնակալ ընթերցող մը կը վարանի այսօրինակ գայթակղեցող ցիւղ գրութեան հաւատ ընծայել : Իսկ գալով ընկերութեան վերադարձալ խօսքերուն, հարկադրեալ կը յայտարարենք թէ՛ կը փափաքենք, որ այդ պարտեզ գիտարար թէ. — Պէնիւնի գերասանա-

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (40)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— 0. —
ՄԱՍՆ Բ.
—
Ը.

1890 յուլիս 15ի կիրակին է : Պոլիսի չորս կողմը թնդանութիւններ կը գոռային. գահիճ Սուլթանի պայրամի առթիւ Տօլտպաճէյի սարայը յաղթական մուտքը աւետելու և միւս կողմէ անակնկալ զուգագիւղութեամբ մը ափ մը տաք-գլուխ այլ սրտոս հայ կտրիճներու Գում-Գաբուի ազգային պատրիարքարանին մէջ սարքած բողոքը սըրբագործելու համար :

Հոս չէ որ ցոյցին բարոյական նշանակութիւնը վեր առնելով մեր առայդ ունեցած կարծիքը համեստաբար պիտի արտայայտենք. իր պարզ գիծերուն մէջ յուլիս 15ի ցոյցը մեր վերջին տասը տարուան ընթացքին մէջ յեղափոխական առաջին գործնական բողոքն է, որ որքան ալ միջակ նշանակալից է, հազար անգամ անոր համար որ ապստամբասէր ուժերուն ի մի խոնկելով բռնութեան զէմ ժանիք ցցնելու կոկիկ դաս մը տուաւ :

Ով որ ներկայ գտնուած է այդ օրը

ցոյցին, լաւ պէտք է յիշէ որ ան առանձինք վեց հազար խուռն հանդիսատես հայութեան մէջ ո՛չ բիր խաղաց և ո՛չ ալ մահ. քանի մը օր կը լրակոտնէրու գործը նկատուեցաւ ան. ինչպէս որ ալ էր արդէն : Գոյցին հերոսներուն կէտ նպատակին շատ որոշ էր. Պատրիարք Ալեքեանը որ բաղդին մէկ դժբաղդ բերումովը Յարութիւն Վեհապետեանի յաջորդած էր քուբէի մը մէջ գրած Սուլթանի պալատը տանիլ մեր ազգային խորաբնատ վիշտերը անոր պարզելու և անկէ դարձան հայացելու համար : Գործը մինչեւ Միւրաքանի դեղարանը յաջող կերպով ընթացաւ :

Գում-Գաբուի ցոյցին լուրը շուտով կարմիր սուլթանի ականջը հասաւ . հայուն ուխտեալ դահիճը իր պատմական հրամանը արձակեց Տէրվիչ փաշային «կիթ չունալը թէսքին էթ» : Տէրվիչ փաշան առանց վարկեան կորսնցնելու տեղի ու տեղը իր պարտքը կատարեց. ջոկատ մը զինուոր հրաւիրապետի մը առաջնորդութեամբ Միւրաքանի դեղարանին մօտ զիմաւորեց հայ հերոսները որոնք Համիտի Սադուսի օրհներգութիւններով պատրիարքարանի դահլիճին պատը բարձրացած զարդարող թուղբան ջարդ ու փշուր ըրած էին : Ան-

հաւասար կռիւր սկսաւ հայ համեստ ուժերու եւ թիւրք զինուորներու միջեւ երբ առաջինները վստահ իրենց դատի սրբութեան վրայ մերժեցին անձնատուր ըլլալ : Յուց բար յեղափոխականները իրենց վայել վարմունք ունեցան. անոնց մէջ մասնաւոր յիշատակելի հանգիստացաւ Նալբանդեան վստեցին եւ սեքստացի Նազարէթը որուն առաջինը ան տեղը զոհուեցաւ եւ միւսը 95 թուականին Պողազէսէնի մէջ. զեղձուկ-բարեպաշտ հայրենասէրի անմահ տիպար մըն էր այդ Նազարէթ Լուսիկեանը, որուն հակակցողութեամբ մարդոց համար Աստուած, ազգ եւ հայրենիք միայն գոյութիւն պէտք էին ունենալ :

Պարզ է թէ ցոյցը շատ հեշտի խափանուեցաւ, քանի որ յեղափոխականներու անմիջական ձեռքակալութիւնը վերջացաւ :

«Գոյց պիտի ըլլայ»ին վրոյցը օրեր առաջ շատ տեղեր տարածուած էր, այնպէս որ տեսակ մը տարօրինակ հետաքրքրութիւն մը առաւ խնդրին հուսմանը ծանօթ շատ մը հայեր Պոլիսի թաղերէն պարզ ազգային հանդէսի մը ներկայ գտնուելու պէս ժողովուած էին եկեղեցին :

Վահրամ առաջին հայ հերոսներէ մի-

ոյն Նազարէթին հետ մօտիկ յարաբերութիւն ունէր որ ան ատեն կալիքաւ Բօլսէյ վաճառականի մը մօտ բեռնակրութեան պահպանութիւն կընէր, ցերեկները քանի մը ժամ ալ մաքսը աշխատելով : Վահրամ սկզբունքով այդպիսի համեստ ցոյցի մը համակարիք չէր, յուլիս 8ի կիրակի օրը Նազարէթին հանդիպելով եւ անկէ 15ին տեղի ունենալիք ցոյցին վերջնական որոշումը լսելով ըլլալիք քննադատած էր ալ ի վերջոյ պատմական անխնայ լի պարագային ի նկատի ունենալով տեղի տուած էր Լուսիկեանին :

Անիկայ առաւտուրն կանուխ Սասունաձեւին եկեղեցին վազելով յուզուած եւ զպուշտ խանդավառութեամբ զիտեց ամեն բան, հայ կտրիճներու իրենց դերը կատարելը, ձեռքակալութիւն եւ զինուորներու ցրուիլը . որքան ալ ցոյցի համեստութեան պատճառաւ եւ Պոլիսի մէջ ըլլալը առարկելով համակարծիք չէր, գէպի պահուն յուզման նշանակալից տեղեցաւ որ քիչ մնաց որ կուշտի բեմովէր հանելով քանի մը զօրական ալ ինքը գետին պիտի թաւար երբ ինքզինքը բռնեց :

Երեկոյն ընկերով մը հանդիպեցաւ երբ ցոյցի մասին իրեն կարծիք հարուց Վահրամ այսպէս խօսեցաւ .

կան խումբը իր ամբողջութեամբ դրա-
մական միջոցներով ընդ մեր
սուրբ հայրենիքի մասին, որոյ
համար այժմ հարկ կը դրուինք ընկերու-
թեան շնորհակալութիւնը յայտնել հրապա-
րակաւ սա անկեղծ յայտնութեամբ թէ
Պէնիւլանի իր ներկայ վիճակին մէջ ը-
րած այս զոհողութիւնը այրի կ'ընող
ֆա. ի գանձանակին մէջ ձգած լուծա-
յին կը նմանի, որ թէպէտ քիչ, սա-
կայն լեցուց զանի. վառապի մենք ինչ
որ ալ ըլլաւ, ստիպուած էինք հեր-
կայացումը տալու, զոր գիտնալով Պէն-
իւլան այդ պէտքը իր շահագործմանը
գործիք կամ միջոց չըրաւ իր ներկայ
վիճակին մէջ. ահա ազգային եւ մար-
դասիրական առաքելութիւն մը, զոր
ճանաչողները միայն գիտեն գնահատել:
Արդ հիմնապետ սուտ է ըսել թէ.
«ինչ ինչ միջոցներով յաջողեալ է հա-
մոզել Աղքատախնամի վարչութիւնը»
Կը ցաւինք որ առանց Ընթերցասի-
րացի եւ Աղքատախնամի վարչութեան
գիմարտ եւ պաշտօնական տեղեկու-
թիւն առնելու վերացականաբար դը-
րած է իբր փաստ ոչինչ ունենալով:
Ահաւասիկ Աղք. եւ Ընթ. ընկերու-
թեանց տուած ներկայացման պատմա-
կան իրողութիւնը, զոր հարկադրու-
թեամբ կը յայտնենք:
Ընկերութիւնս խիստ կանուխէն չը
կրցաւ մարդարէանալ թէ, Ընթ. ի պատ-
ուարժան վարչութիւնը ի նպաստ վա-
նի հայ սովորեց ներկայացում պիտի
տայ, ուստի ըստ իր կանոնագրի 1898
Գիկտ. 15էն սկսաւ ձեռնարկութեան.
եւ հաջիւ կարողացաւ մայիս 8ին կա-
ռավարական հրամանագիրը ձեռք բե-
րել, գրեթէ չորս ու կէս ամիս աշխա-
տելէ յետոյ, եւ որովհետեւ 5-6 օրէն
ալ միջոց չունեցաւ տուականներ ծախս-
լու համար. հետեւաբար իրեն ալ օգ-
տակար չեղաւ:
Ընթ. ի տուականներն ալ սկսան բաժ-
նուի մեր տուականը հետ, որ միան-
գամ սկսած էր չէր կրնար ետ կենալ:
Արդ այս տեսութեամբ կարծենք
պէտք էր որ, Ընթ. ի վարչութիւնը
կամ խիստ կանուխէն սկսէր, որ գիտ-
նայինք, եւ թերեւս համախորհուրդ
վարութիւնը եւ կամ առաջնութեան ի-
րաւամբ դադարեցնէր ներկայացումը որ
չը վնասուէինք. պաշտօնական գրու-
թիւնք մեր ըսածը կը հաստատեն. ուս-

տի կը ցաւինք որ եթէ վանի սովորեց
մէջ Օհաննէս, Թորոս կան, եւ մեզ հա-
մարիւն հայեր, Գահիրէի գաղթական
հայոց մէջ ալ մահամբո՞ք կարօտեալներ
կան նոյն անունները կրող եւ մեզ հա-
մարիւն հայեր են, ուրիշն ի՞նչ խղ-
ճահար խտիր համարիւն եղբարց մէջ.
մին առնել եւ միւսն թողուլ. այս ցու-
ցամուրթինէ աւելի բան չնշանակեր:
Մնամք

Ի դիմաց Գործ. Ժողովոյ աղքատախնամ
Ընկերութեան Գահիրէի Հայոց:

Ասեմապետ ԳՐԻԳՈՐ ՄԻՆԹԱՆՃԱՆ
Բ. Ասեմապետ ՆԵՐՍԷՍ ՔԷՄԱՆՃԱՆ

19 Օգոստոս, 99
Գահիրէ

ԼՐԱՔԱՂ

○.○.○

Անցեալ կիրակի Սօփիայի հա-
յոց եկեղեցւոյն մէջ մասնաւոր
պատարագ մատուցուեցաւ և հո-
գեհանշատեան պաշտօն կատար-
ուեցաւ ի յիշատակ ողբացեալ Օր.
Յրայզէրի, որ 1896ի դէպքին
պատճառաւ Պուլկարի ապաստա-
նած հայ գաղթականութեան միւ-
թարիչ հրէշտակը եղած էր: Այս
կրօնական արարողութեան ներկայ
գտնուած է նաեւ անգլիոյ ներկա-
յացուցիչը իր հետ ունենալով հիւ-
պատասարանի պաշտօնէութիւնը:

—Սիւլվէնէն օգոստոս 26 թուա-
կանով հետեւեալը կը գրեն մեզ.

«Ամսոյս 8ին տեղւոյս Հոգա-
բարձութեան ընտրութիւնը կա-
տարուելով, քուէից բացարձակ
առաւելութեամբ ընտրուեցան հե-
տեւեալք.

- Տիար Մարտիկ Սիւլվէնէն
- » Սուքիաս Սուքիասեան
- » Յակոբ Փափազեան
- » Յարութիւն Թնկերեան
- » Աբրահամ Գարարեան

—Ինչպէս անցեալ շաբաթ ա-
ւուր թիւով իմացուցած էինք,
տեղւոյս Ազգ. Երկեւո վարժարա-

նի ուսուցչական խումբի կազմու-
թիւնը որոշուած էր նոյն օրն.
իսկ կիրակի օր Հոգաբարձու-
թիւնը պաշտօնապէս Տիար Յ.
Պօնճուգեանի յանձնեց ներքին
Տնօրէնութիւնը: Շորեքշաբթի օ-
րէ ի վեր վարժարանը բացուած է
նախորդ տարւոյ ուսուցիչներուն
մէկ մասը վերահաստատուած է.
իսկ մեկնողներուն տեղ պաշտօնի
կոչուած են

Տիար Յ. Պօնճուգեան տնօրէն
—դասատու, իր ուսումը առած
նախ ի Պոլիս և խոյ Գերմանիա
Տ. տօք. Շաքարեան՝ դասատու
բնական գիտութեանց՝ վկայեալ
բժշկ Պոլսոյ բժշկական վարժա-
նանէն:

Տ. Եր. Յովսէփեան՝ դասա-
տու հայ. և զազ. լեզուաց և ու-
րիշ առարկաներու, Պոլսոյ Կայս.
Հիւէին շրջանը աւարտած և 6-7
տարի գաւառաց ու մայրաքաղա-
քին մէջ ուսուցչութեամբ զբաղած է:

Տ. Սուլիմ՝ դասատու պատմու-
թեան և աշխարհագրութեան, որ
Միւլլիքէի վարժարանէն շրջան-
աւարտ ելնելէ վերջ Հանրային
պարտուց վարչութեան պաշտօն-
եայ ու միւսնոյն առեն Օրթա-
գիւղի Թարգմանչաց և Պալադու
վարժարաններուն այցելու ուսու-
ցիչ և հոգաբարձու եղած է:

—Ռուստուգէ մեզ կը տեղե-
կացնեն թէ, տեղւոյն Ազգ. Երկ-
սեւ վարժարանի Տնօրէնութիւնը
այս տարի երկրորդական ուսու-
ցիչներու յանձնուած է և հետե-
ւաբար բարձրագոյն կարգերու ա-
շակերտները ցրուած են:

Ռուստուգի ներկայ յետադէմ
քայլը, որ խորապէս մեզ տխրե-
ցուց, շատերու կողմէ կանխա-
տեսուած էր արդէն, քանի որ
մեծփոր քահանայի մը փիլոսոֆի-
տակ ապաստանող մի քանի ան-

փորձ և կուսակցամոյ պարոններու
քմահաճոյքին յանձնուած էր կը-
թական կարեւոր գործին ղեկա-
վարութիւնը, որ խոհեմ ձեռքե-
րու մէջ եթէ գտնուէր ոչ երկպա-
ռակութիւն տեղի կունենար և ոչ
5-6 հազար Ֆրանք պարտք կը
գիշուէր, որուն պատճառաւ այ-
սօր Պուլկարահայոց մէջ Ռուս-
ճուգի ազգ. վարժարանը իր գրա-
ւած առաջին կարգէն երկրորդի և
թերեւս երրորդի կ'իջնայ. մեղք
Միայն սա չափ մեր խիղճը հան-
գարտ է որ Խրաշաշնք սկիզբէն
ի վեր ներկայ չարիքը գուշակելով
ազգաբար եղած էր, բայց խուչե-
րը չսեցին. իսկ այսօր աչքափն
թող տեսնեն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. ՏԱՐԻ

Կազմեց Յ. Կ. Պօնճուգեան

Այս պատկերազարդ Քերական-
Ընթերցարանը իր դիւրութեամբ մէ-
թոտով և իրագիտական ու ազգ.
պատմական ծանօթութիւններով
արժանի է Արգոյ ուսուցիչներու
մասնաւոր ուշադրութեան:

Գին՝ հատը 60 սանթիմ. դըպ-
րոցներու և գոնէ 20 օրինակ գը-
նողներու համար 15 օ/0 զեղչ՝ կը
ծախուի կազմողին քով ի վառնա.
ուրիշ քաղաքներէ դիմել սա հաս-
ցէով

J. G. Bondjoukian
(Bulgarie)

Varna

ՎԱՐԺՈՒՀԻ ԿՈՒՁՈՒԻ

Տպարիճի աղջկանց վարժարանին հա-
մար կուղուի վարժուհի մը, որ կարողա
նայ աւանդել հայերէն լեզուի հետ երկ-
րորդական ուսումնէր ու ձեռագործ.
չափաւոր ամսականով. փափաքողները
դիմեն Հոգաբարձութեան նամակով:
2-4

«Ձարթելու շրջանը եկած հասած է.
ինչ որ խոհեմները պիտի նկատել տան
իմ ալ թուեց համոզումն է. տակաւին
այդ տեսակ միջոցներու դիմելու հա-
մար մեր առած քայլերը կանխահաս
են. բայց ի՞նչպէս կրնան բռնադատել
որ առաջ զոհուելու եռանդով վառուած
հուր ու բոց բուռ մը եշիտասարդներ
որ զարնել զարնուի միայն կը խորհին
երկրորդական պարագաները բոլորովին
անտեսելով:

«Այսօրուան զարնուողներուն մէջ
նաղարէթը շատ մօտէն կը ճանչնամ,
շատ անգամ հետը տեսնուած եմ, մին-
չեւ ասկից շաբաթ մը առաջ, ահա ա-
նոր ինծի ըսածները.

«Պարոն վահրամ երբ պիտի հասնի
ան երանելի օրը, երբ սա անիծուած
Հայրենիքին թշնամիներուն հետ գա-
նակ դանակի գամ եւ ազդիս սիրոյն
համար, անոր օգտակար ըլլալու հա-
մար գոհուիմ»

Թ.

1890 յուլիս 15ի ցոյցը ըստ մեզ ան-
ժամանակ կերպով առաջ եկած բողոք
մըն էր որ փոխանակ հայ ազգը բըր-
տապիղիու հիասթափեցուց ատեն մը,
անանկ հիասթափում մը որ հակայի
զափոխական աղքեցութեան մը ամեն
երեւոյթները տուաւ պահ մը, այնպէս

որ չորս հինգ տարիներ պէտք եղան.
հասնող սերունդը պարտաւորեցաւ գոր-
ծի գլուխ անցնել յեղափոխական գա-
ղափարին կենդանութիւնը ապացու-
ցանելու համար:

Սխալ չը մեկնուելու համար կը փու-
թանք ըսել որ եթէ ցոյցին ոգին եւ
նպատակը վսեմ էին միջոցները ան-
պայման նեղ էին, հետեւաբար ար-
դիւնքը չափէ դուրս անբաւական եւ
վնասութեան ածման պատճառ եղաւ:

Այս տեսակ ցոյցերը պատմական ան-
խուսափելի պահանջի անուանով արդա-
բանքել աշխատած են շատերը. անոնք
որ կուսակցական անհեռատեսութեամբ
հաշիւն ու տրամաբանութիւնը մէկ
կողմ նետած վերէն եկած բարեկամա-
կան ձայներու լսած եւ արձագանգ
դարձած են, փոխանակ շրջանայեաց
կերպով խնդրին ուսումնասիրութիւնը
ընելու եւ առաջ գալիք արդիւնքի քա-
նակը եւ որակը ճշգրտուի կը համար-
ձակինք ըսել որ մինչեւ այսօր այս
տեսակ մտածողներ կան եւ գուցէ բա-
ւականաչափ աչքի զարնող թիւ մը կը
կազմեն այդպիսիները, անոնք որ ան-
վիճելի ճշմարտութիւններ լոյս աչ-
խարճ բերելու տկարամտութիւնը ու-
նին որոց այդ տեսակ ձախարհ մտքեր
թելադրողները եղած են տարիներ ա-

ռաջ աստուածացուցուած իմաստակ եւ
փրփուր բառական յեղափոխապետներ
որ ապահով կեցողներու մէջ երանա-
ւետ ամառներ եւ ցնծալից ձմեռներ կը
անցնէին հայ թշուառ դասակարգի աղ-
քատիկ գրպաններէն մղուած դանկե-
րով, որոց նուիրատուները իրենց տը-
ւած համեստ գումարներուն հետ պատ-
րաստ էին արիւն ալ վրայ տալու զի-
րենք շահագործող անսիրտներու մա-
սին ունեցած անխախտելի վստահու-
թեամբ կուրացած: Այս վայրկեանիս
երբ տխուր անցեալ մը մեծ մասամբ
կրնայ հաստատել մեր վերագրեալ տո-
ղիւր ճշմարտութիւնը, յեղափոխա-
կանները աւելցնել իրենց ապագան ամեն
կերպով անպահոված կասկած չեն ձգեր
մեզի մտածելու որ ի՞նչ աստիճանի
խղճահարսութեամբ վերաբերուած են
ժողովրդի իրենց նկատմամբ տաժած
հաւատքին հետ:

Ձանկելուան եւ իր ընկերներու ձեռ-
բակալուիլ եւ բանաւարկուելէ ետքը
Պոլիսի մէջ մենք տեսնեցք որ յեղափո-
խական ոգիով վառուած շատ մը հայեր
երկրասարդ թէ տարիքոտ զիրենք գը-
գող ազգային գաղափարը թօթուե-
լու սկսան. լուրջ գործունէութեան հե-
տեւողները անխախտ մնացին կոռու-
նի վերայ. իսկ անոնք որ շաղկապի

պոռոտախօսութեան ընդունակութիւնը
չունէին՝ անոնք ալ ուժացան, մեծ մաս
մըն ալ այնպէս համոզուած էին որ հայ
յեղափոխութիւնը, —չնայելով որ դեռ
եւս պատրաստուելու վրայ էր— պա-
հետիւն ահագին ուժեր ունէր, որոց
գործադրութեան գրուելովը հայկական
դասը խորհրդաւոր եւ յուսադրող կեր-
պարանք պիտի առնէր, թէ Պոլիսի մէջ
սարքուած ցոյցի մը, շարժումի մը ո-
րոտնդոստ արձագանդ պիտի տար տմ-
բող Մայր-Հայրենիքը, ուր մեծ զօ-
րութիւն մը կար որով հայկական հար-
ցը ամբողջ աշխարհի համար սպառնա-
կան երեւոյթ ստանալով զօրեղ կեր-
պով քարտիրոս դիւանագէտներու կա-
նաչ սեղանին վրայ գրուելով վերջա-
պէս իր բանաւոր լուծումը պիտի բա-
տանար. եւրոպան, մեր կարծիքով ըմ-
բռնած էր որ ինչ չափով որ Սուլթա-
նը եւ իր կառավարութիւնը ինկած ու
ապականուած էին, ան համեմատու-
թեամբ ալ հայ ազգը հասունցած եւ
զօրացած էր:

Որոնք էին ապա մտածողները:

Շ. Կալմախարկան

(Շարունակելի)

—○—

ՏՐԷՑՅԻՒՄ ՄԱՏՏԵՍԻ

Պուլստան էվկլեթի նուսխեմիդ. տէ Տրէյֆիւսին 10 սէնէ իչիւն մահքիւմ օլտըղընը եազմը տըգ. Պէշ սէնէ եաթտըղը հիսապա գօնըլտնազ:

Անը մահքիւմ իտէն մահքեմէի ապքերիյէ ազալարը մէրգուլմ գապիթին ըուլթպէսի ալընմամսը խուսուսընտա պիր արիդէ իմզալամըլտն տըր: «Թան»ըն պէյա. նընա կէօրէ, ընն մահքեմէսի ճուհուրիյիթ ընիսինտէն Տրէյֆիւսին ճէզաքընըն աֆիլընը ին. թիլար իթմէքտէ իմիշ:

Միւտաֆաա վէթիլընի Տրէյֆիւսին իմզալար թաթթընտա պիր արդուհալ իլէ տալմանըն թէմիլընէ պագըլմասընը իսթիտա իթմիլընէ տիր:

Մ. Զօլա «Պուս» տա Տրէյֆիւսին մահքիւմ իթմէքտէ գարշը շէտիտէն բրօթէսթ իթմէքտէ տէմիշ տիր քի քէնտիսի 1898 յունվար. տա պիլիթիթի լէսթէրհաղի պիր թագըմ էվրագ Ալմանիա սէֆա. ըթթինին աթաշէ միլիթէրինէ թէս լիմ իթմիշ տիր. պինաէն ալէյհապը միւհըրիմ Տրէյֆիւս օլմայուպ լէսթէրհաղի տիր:

Մահքիւմ հապսանէսինտէ, եա աֆիլա նայիլ օլտնաղընա վէ եա. խօտ իստէի մուհաքէմէտէ պէ. ըաթթը զիմէթ իտէճէկինէ իւ. միւտար պուլընմագտա ըմըշ:

Ֆիկարօնըն զաննընա կէօրէ, տալայը թէմիլընէ պագմագ իչիւն վէթիլընէ իսթիտա ընտտ օլընմագ. Բարիստէ Սօսիլիսթիլէր վէ յեղափոխականըն Տրէյֆիւսին մահքիւմ իթմէքտէ գարշը նիւմա. իչիլէր իհրա իթմիլէր. Պրիւքսէլ. տէ պաղը կաղէթալարը եաս է. լամի իլէ նէշը օլընտըլար: Պու. տարէշթտէ էհալի ֆրանսըղ գօն. սօլօսանէսինտէ գարշը նիւմայիշ իհրա իթմիշ տիր:

ՄԻԹԵՆԵՎ ՎԻՅԵ

—

—Հէր պիր տէվլէթ շու սըրա գուրէի արզըն պաղը գըթա. լարընտա գուհուր իտէն եուսուր. ճագ խասթալըղընա գարշը իհ. թիլայթ. քեարի թէտպիլընէ միւրա. ճաթ իթմէքտէ տիր. միւգըրը իլլիթի վէթիլմէնին նախէհան Բօրթուկալտա ըսպաթը վիճուտ իթմէսի պիւթիւն էվրօրա հիւ. քիւմէթլէրինի թէլաշա սէվգ իթ. միշ տիր: Յրանսա հիւքիւմէթի եուսուրճագտան մէմայիթի մուհա. ֆազա իթմէք իչիւն 300,000 ֆր. պիր մէպլաղ թախսիս իթմի:

«Մէսաթէրի» վարօրարընտան պիրինին իսքէնտէրիէտէն Պէրու. թա նազլ իթմիկի պիր կէնճ ըուլ. Եուսուրճագա թուլթուլուշ օլուպ նազարէթտէ վէֆաթ իթմիշ տիր, օ հալտէ թիւրքիա գըթաքընտա տախի բէք արգգաթըլ թէտապիրի սըհհիլէ միւրաճաթ օլընմագ.

տա տըր:

—«Էնտէրանտանս Բուլէն»ին Սթանպուլտան ալտըղը մալիւմաթա կէօրէ, Սուլթան Գարաաաղ Բը. ըննսինին Սթանպուլա կիթմէսին. տէն իսթիֆաաթ իտէրէք, քէնտի մուհաֆազաք իչիւն պիր մըգտար Գարաաաղլար իսթէմիշ տիր: Մալիւմ օլտըղը իւզրէ, Սուլթան իսլաւարտան միւթէշէքթիլ օլան մուհաֆազա ապքէրլէրինէ էմի. յէթի օլմատըղընտան պուսլարըն եէրինէ էլլի նէֆէր Գարաաաղը կէնճլէր ճէլպ իթմիշ իտի. շիմտի պուսլարըն մըգտարըն արթմագ իսթէմիշ տիր:

Պիր խալիֆէ քէնտի թապաաի իսլամիյէսինին շախսընէ էմիլիթ իտէմէյուպ տէ հայաթընը կնա. վոշարա թէսլիմ իթմէք իսթէ. մէսի ճաաի թաաճուպ աաա օլըն. մամալը. զիրա Սուլթան քէնտի հարէքթիլ իլէ թապաաաընըն հիւս նի թէվլէտնուհընը ճէլպ իտէմէմիշ օլտըղընա քէնտիսի տախի գանմը տըր. պինաէն ալէյհաքէնտիսինի թէհիլէքտէ կէօրիւպ, էննէպի պիր հիւքիւմտըրըն պէնտէկեանը սա. տըգանէսինէ թէսլիմ օլընմագ էն մինասիպ կէօրմիշ տըր:

Պու հալտէ կիճէ կիւնտիւզ ընտի էքմէիլ իլէ պէսլէնէն աաա. քիլի խասթէսինէ էմիլիթ իթմէ. յէն պիր բաաիշաճ տիկէր թա. պաալարա նէ տէրէճէ էմիլիթ իտէպիլիթ. պուսա մուգապիլ, թապաալարըն տախի պէօլլէ էմի. յէթիլ պիր բաաիշաճա նէ նա. գարլէ պագաճագլարը թարիֆէ հաճէթ գալմագ:

—Գարաաաղ Բընէսի վէ Բըն. սէսի Սթանպուլտան ալտէթլէրին. տէ Աթինայա կիտուպ, Եուսան Գրալը խանէտանընտան սուրէթի մուլթանթանէտէ գապուլ օլընմըլ. լար տըր:

—Պապը Ալի թէլէկրաֆ ա. ժանսլարըն վասիթաք իլէ Գա. ըաաաղ Բընէսինին Սթանպուլա կէլմէսի բօլթիթի պիր սէպէպ. տէն տօլայը օլմատըղընը իլան իթմիլմէքլէ պէրապէր, պու եօլ. ճըլըզլէ Բընէս Սուլթանա արզը մուհապպէթ վէ թէլէքթիւրաթ (.) իթմէյէ կէլտիկինի պիլտիլմիշ տիր:

—Պիլկրատտա Գիալ Միլանըն նէֆսինէ սուի գաաա իտէն Բէն. չէվիլին մուհաքէմէսի տէվսիմ իթ. մէքտէ տիր:

—Սթիլթէհիմ մահքեմէ հու. զուրընտա իլք տէֆա քիմսէտէն թէլիլի օլընմատըղընա ըսար իթմի իսէտէ, պիլալէրէ՝ միւս. թանթիլ հուզուրընտա վէրտիկի իֆաաթէրի իթիլաֆ իտուպ, պա. զը լիպէրալարտան, եանի Գօլէզ Գօվաթէպիլտէն վէ Տիմիշ Նիքօ. լիչտէն թէլիլի օլընտըղընը սէօլ. լէմիշ տիր, ֆագաթ պուսլար տա. լա ճանի թանըմատըղարընը ի. ֆաաթ իթմիլէր տիր:

—Աֆրիգատա Յուսու-Լամու ճիվարընտա թուարէկ թապիր օ.

լընան նիմ պէտէվիլէր պիր թա. գըմ ֆրանսըղ սէյեհալար իւզէ. իննէ հուճուլ իթմիշ վէ պէտէվի. լէրտէն խալը թէլէֆիլայթ օլմագ. լէ պէրապէր ֆրանսըղար էմմէ. թէն թէլէֆ օլմուշ օլտըղընը թու. նուստան պիր թէլէկրաֆ պիլտի. ըիյօր:

—Եվրատ նէհրի իւզէրինտէ Պիլէճիկէ գաաա թէլմտիտ օլը. նաճագ չըմէնտըֆէր խաթթընըն ինչասընա եազընտա պաշլանըլա. ճաղընը Սթանպուլ կաղէթալարը եազըլօրար:

—Սըր Աչմէթ պարթլէթին ալ. տըղը իմթիլալարտան՝ Սէլանի. քին էլէքթիլիլէ թէնվիլի մաա. տէսի Սէլանիք չէհրինի էլիլմ կաղ իլէ թէնվիլ իտէն չիլքթիլ թէլէքիթ օլընմըլ տըր: Էկէր մէգ. քիւր չիլքթիլ գապուլ իթմէք իսէ օ զէման պու հագգ Աչմէթ Պարթ. լէթէ գալաճագ ըմըշ:

—Բարիստէ Եապուլ սօգաղըն. տաքի գալէտէ կէրէն վէ ըէֆի. գաալ էլան քէնտիլէրինի մուհա. ֆագա իթմէքտէ տիրէր:

Մէղըրը սօգաղըն պէքիսի մահքիւլ պուլընանարա նաֆագա վէրմէքտէ օլտըղընտան տօլայը տէրտէսթլէ թէվգըֆ օլընմըլ տըր:

—Կէլէճէք սէնէ Բարիստէ ալը. լաճագ օլան սէրկիլէ վաղ իտիլ. մէք իւզրէ Սթանպուլ թէրսանէ. սինտէ 400 պէկիր գուվլէթինտէ պիր վաքօր մաքինսը եաքըլմագ. տա օլտըղը թիւրք կաղէթալար եազըլօր:

—Սթանպուլտա Պէյ Օլլուտա Գօնգօրտիա թէլաթօսը սալօնըն. տա հէր տայիմ գուլմար օյնանըլ. մագտա օլտըղը հէրքէսէ մալիւմ տըր. պու իսէ նիզամէն մէնն օ. լընմըլ իսէտէ ըլլալթ վէ պախ. չիլէր սայէսինտէ գուլմարճըլըգ տէվամ իթմէքտէ իտի. ֆագաթ կէլէն կիւն 15,000 լիւրալը ճէսիւմ պիր գուլմար մուլմէլէսի իհրա օ. լընաճաղընը Սուլթանըն եալէր. լէրինտէն Յարիք բաշա ախլամըլ վէ հէր նաալըսա քէնտիսինէ բայ չը. գարալալա մուլթագ օլմատը. զընտան տէր հալ գօմիսէր վէ չա. վուշար եօլլայուպ մէղըրը սալօնը արաշտըրմըլ, բէք չօգ բարա իլէ պէրապէր գուլմար ալէաթլարընը տէրտէսթ վէ գուլմարճըլարը թէվ. գըֆ իթմիլմիշ տիր:

—Իզմիլտէ Գարա պրուստա 5 պալըգճը պալըգ ալլամագ իւզրէ պիր սանտալտա պուլընտըղարը հալտէ տէնիլտէն աղընը ուզաթ. մըլ օլան պէօլիւք պիր պալըգ պալըգճըլարտան պիրիսինի գա. բըպ զայալ օլմուշ տըր: Տիկէր պալըգճըլար հէմէն արգաաալա. ընը արաշթըրմըլար իսէտէ, պու. լամմըլար տըր:

—Բագար էրթէսի կիւնիւ, Սիլիս. տրէտէ, սաաթ 2 ըատտէլէրինտէ չիտտէթլի եաղմուր վէ սօնրա տօ. լու եաղմըլ օլմալէ, խալը խա. սարաթը մուհիպ օլմուշ տըր: Եաղմուր վէ տօլու 10 տագիգա գաաա իթմիշ իսէտէ,

տանէլէրի ճէվիլտէն պէօլիւք վէ պաղէն ուֆագ եուսուրթա գըտէ. սինտէ օլմալէ, չէհրին էքթիլ ճալարընը գըրմըլ վէ պալարա ու պաղէլէրէ չօգ խասարաթ վէր. միշ տիր:

ԹԱՏՐՈՆ ՊՈՐԻՍ

Յաալիկայ երէքալթի գիլիլ յոյն թատերախումբը ի նպատակ Տ. Գալէմ. ճեանի Գիւնուլաթէ անուան միլկատալա. խաղը պիտի ներկայացնէ:

Գիլիլ Ա. կարգ 1 1/2 ֆր. Բ. 1 ֆր. Կարճէ որ ժողովուրդը քաջալերէ նոր պատաւօրեալն որ հայ թատերին վա. ղեմի աշխատաւորներէն է:

Ա. Զ. Դ.

Գարոցական նորագոյն եւ գիւրու. սոյց դաաագիլթիւր համար դիմել Գ. Տէօքմէճեանին, Բուսլուք. Գիլիլ չա. փաւոր. պալմաններ գիւրամատչելի:

ՄԵՐ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍՈՒՐԱ ԲԱՆԱԿԻ

ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՆՈՒՐԱՆ Ա. ՊԱՐԿԵՆԻ Ե 500,000 ՖՐ. ՈՍԿ. 50,000 տոմսեր հրապարակ հանուան են, որոնց 25,000 պիտի շահին նա.

տեւեալ կերպով. ներկայ տարւոյ՝ Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր. Յուլիս 7 1,500 » 135,180 » Օգոստ. 4-5 2,000 » 241,780 » Սեպտ. 3-4 » » 309,080 » » 23-24 » » 363,250 » Հոկտ. 13-31նոյ. 16000 » 3389,040 »

ԳԻՆԵՆ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ	ՄԵԼ ԵՆ ՈՍԿ. ՖՐԱՆԿ
5	8	10	14	12	8	4	6	4	30
1	2	3	5	7	6	4	30	115	20
57	60	28	80	14	80	115	20	57	60
28	80	14	80	115	20	57	60	28	80

Ա. Զ. Դ.

Սիլիստրէի Աչգ. վարժարանին համար երաթիշտ-գաաաաա մը կը ուզուի: Գիմիլ տեղւոյն Հոգաբար. ճուլթան:

Կ. Պոլսոյ Թաղային վարժա. րաններու մէջ երկար տարինը պաշտօն վարած և Աչգ. Պատրի. աիքարանէ վկայալ տիկին մը պատրաստ է թէ Պուլկարիոյ թէ արտասահմանի վարժարանաց մէջ պաշտօն ստանձնել:

Փորձ վարժուհի մը պէտք ու. նեցող ազգային մարմինը թող զի. մեն խմբագրութեանս:

Վալցի հասկցող պարկեշտ, գործու. եայ քայաճի մը կը փնտռուի. բնակ. կարան, վառելիք, հաց 70 ֆրանք ամ. սաթոշակ. զիմէ և Ոստանիկեան Սիլիստրէ:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войнико